

Մշակութային եւ Հասարակական  
Երկարաթափեր

# Յոյն

1800 բունան  
Հայաստանում 320 դրամ



## ԻՐԱՆԻ 44-ՐԴ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱԳԵՐԸ

# ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ


- 2 **Համայնք**
- 4 **«Ազգ»-ը Էդիկ Մեիրաբեանի լեզվաբանական աշխատանքի մասին**  
Ինգա Պետրոսեան
- 6 **Արձագանք**  
Ռուբինա Օհանեան
- 7 **Հայ վերլուծաբանները դժգոհ են**  
**Եւրոխորհրդարանի ընդունած բանաձեւից**
- 14 **Բանաստեղծություններ «Պնում եմ Էտիլդի»**  
**գրքից**  
Էդւարդ Գալսեղեան
- 16 **Երեւանի երեխաները**  
Վիրո Տէր Կարապետեան
- 18 **Յուզահանդեսներ Շարաբէյեանի անւան**  
**ժողովրդական ստեղծագործական**  
**կենտրոնում**  
Արմինէ Մելիք-Իսրայելեան
- 20 **44-րդ համահայկական խաղերը**  
Արման Տէր Ստեփանեան
- 22 **Խոհանոց**
- 23 **Տնտեսուհու անկիւն**  
Քաթրին Եաղուբի
- 25 **Ժամանց**

Մշակութային և Հասարակական

# Յոյս

Երկշաբաթաթերթ

6-րդ սարի, քիւ131, Սեպտեմբեր 26, 2012,  
1800 րուման  
Հայաստանում 320 դրամ



- 8 **Հայ տպագիր գրքի 500-ամեակը**
- 8 **Հայ գրաւոր մշակույթի նոր շրջան**  
Արամ Բաբայեան
- 9 **Հայ տպագիր գրքի տարածման քարտեզ**
- 10 **Ժամանակագրություն**
- 10 **Ո՞րն է առաջին հայերէն տպագիր գիրքը**

## Պ ա ր ս կ ւ ե ր է ն ք ա ժ ի ն

- 2 **Այս համարի պարսկերէն էջերում**
- 4 **21 տարի սովետական համազգեստից փարատելուց անց**  
**Ջուլիա Յակոբեան**
- 6 **Եգիդի թուրքերը**  
**Հայաստանում**
- 8 **Նեիրու Ջագրոս**
- 8 **Հարցազրոյց 2012 թւականի ռըրոտիկի մրցութիւնների**  
**ախոյան խմբի անդամ**  
**Դրո Պողոսեանի հետ**  
Անի Ղելիչեան
- 10 **Պտոյտ Վիեննայում**  
Արբի Մովսէսեան
- 13 **Նոր Ջուլայեցիների մօտ**  
**տարածւած**  
**Նախապաշարումները**  
Զրանդ Ղուկասեան
- 14 **Երկու պատմաձք «Ազատ**  
**անկում» գրքից**  
Լեոնարդո Ալիշան

<p><b>Յոյս</b></p> <p>Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p>Արտօնատէր՝ Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝ Քարմէն Ազարեան, Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինէ Մելիք-Իսրայելեան</p> <p>Հայերէն բաժնի սրբագրիչ՝ Քարմէն Ազարեան</p> <p>Գեղարւեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան</p>	<p>Գովազդ Անի Ղելիչեան</p> <p>Կայք Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարզական Արման Տէր Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն Քաթրին Եաղուբի</p>	<p>Հասցէ՝ Թեհրան, Էնդելար պողոտայ, Վալի Ասր քառուղի համար 1048 <b>66495180 66492693</b></p> <p>Զեռախօս-հեռապատճէն՝ <b>66495208</b></p> <p>hoosy@inbox.com www.hoosy.com</p>
---	--	---	---

# ԿՐԿԻՆ ԱՇՈՒՆ, ԿՐԿԻՆ ԳՊՐՈՋ

Արփինէ Սինանեան

Սեպտեմբերեան հաճելի օրերուն ենք գտնուում: Մի կողմից եղանակը պատրաստուում դիմաւորել գոյնզգոյն ու եռանդուն աշնանը, իսկ միւս կողմից մարդիկ սիրով թարմացնում են իրենց գիտելիքների շտեմարանը:

Աշակերտներ, ուսանողներ եւ այլ ուսումնարան յաճախողների մօտ նոր կեանք է սկսուում: Բոլոր ճամբորդութիւններից վերադառնում եւ շտապում են ուսումնական պիտոյքներ ու գրքեր գնել:

Շուկաներում, խանութներում եւ տներում խանդավառութիւն կայ: Ամէն տեղ դպրոցի ու դասի մասին է խօսուում:

Երեխաների դէմքին նստած ժպիտը այնքան քաղցր է, որ ցանկանում են նրանց պէս վայելել՝ որ մի օր, գոնէ մի օր վերադառնաս անցեալ դպրոցդ ու նստել դասարանի նստարանին: Ու այսպէս մտքովդ թռչում ես յուշերիդ գիրկը ու սլանում դէպի հեռու մանկութիւն:

Փոքրիկների համար հաճելի է լսել ծնողների կամ անելի տարեցների դպրոցական յուշերը: Փոքրիկները սիրում են իրենց օգնել, խրախուսել ու քաջլերել դպրոց գնալու համար: Բոլորն ուրախ են այս օրերում: Աշխուժութիւնն ու եռուզեռը նոյնիսկ շօշափելի է հանրային երթեւեկութեան մէջ:

Շուտով դպրոցում վազվզող մանուկների քայլին կը համերգի աշնան տերեւաթափի խշշոցը: Մենք սիրում ենք դա: Թող ամենակալ Աստուած շնորհի բարձր որակով ուսումնական տարի բոլորիս համար:

Շնորհաւոր նոր ուսումնական տարին:



## ԹՈՒՆԵԱՆ ԳՊՐՈՋԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՂՈՒՐԴԸ ԴԱՅԱՆՉՈՒՄ Է ՇԱՔԷ ԱԼԵՏԵԱՆԸ ՄԵԱՅ ՓՈԽՏԵՍՈՒՉ

Սեպտեմբերի 22-ին, դպրոցների բացման առաջին օրը, Թունեան դպրոցում բողոքի հաւաք էր: Աշակերտութեան ծնողները դէմ էին կրթական խորհրդի այն որոշման, ըստ որի դպրոցի փոխտեսուչ Շաքէ Ալետեանը պիտի փոխադրուի այլ դպրոց եւ նրան փոխարինի Հրանուշ Սարգսեանը: Կրթական խորհրդի որոշման դէմ ծնողները համոզուած են, որ Շաքէ Ալետեանը լաւածանօթ լինելով դպրոցի պայմաններին, եւ աշխատելով այս դպրոցի վերակառուցման ժամանակաշրջանի դժւար օրերին, լաւագոյնը կարող է վարել դպրոցը եւ անհասկանալի է, թէ ինչու պիտի փոխուի: Մինչ այժմ կրթական խորհուրդը նոր որոշում չի տւել, իսկ օր. Շաքէն, ծնողներից մէկի ասութեամբ, յայտարարել է, որ Թունեանից հեռանալու դէպքում, ուրիշ դպրոցում չի աշխատի:

# «ԹՈՒՄԱՆԵԱՆԱԿԱՆ ՀԵՔԻՎԹԻ ՕՐ» ՓԱՌԱՏՕՆԸ ԼՈՌՈՒ ԴՍԵՂ ԳԻՒՂՈՒՄ

## ԱԴԷ ԲԵԳԻՋԱՆԵԱՆԸ` ԼԱԿԱԳՈՅՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏԻԿՆԻԿԱՎԱՐ



Արդեն եօթերորդ տարին էր, ինչ Հայաստանի տիկնիկային արևեստի գործիչների միութեան (ԻԲՆԻՄԱ) նախաձեռնությամբ, Յովհաննէս Թումանեանի ծննդավայր` Լոռու մարզի Դսեղ գիւղում կայանում էր տիկնիկային թատրոնի միջազգային փառատոն: Այս տարի սեպտեմբերի 8-15-ին տեղի ունեցած փառատոնին, Իրանից ներկայ էր մէկ ներկայացում` «Նոր ծնեռ պապիկը» Ադէ Բեգիջանեանի տիկնիկավարությամբ, որի համար Ադէն արժանացաւ «լաւագոյն երիտասարդ տիկնիկավար» տիտղոսի:

### Խաչվերաց

Խաչվերացը քրիստոնէական տօն է, որը տօնուում է Հայ Առաքելական Եկեղեցու, Կաթողիկէ և այլ գմբէթակիր եկեղեցիների կողմից:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին տօնում է Խաչվերացի տօնը սեպտեմբերի 11-17-ի ժամանակահատուածում, կիրակի օրը: Խաչվերացը տաղաւար հինգերորդ և վերջին տօնն է: Այն նւիրւած է խաչը գերութիւնից վերադարձի, և նրա բարձրացման և փառաբանութեան պատմական յիշատակին:

610 թ. պարսից խոսրով արքան մեծաքանակ զօրքով յարձակւեց Բիւզանդական կայսրութեան վրայ և մտնաւ Ս. Յարութեան տաճար և գերի վերցրեց այնտեղ պահուող տիրոջ Ս. Խաչը, որ Դ դարի սկզբին Կոստանդիանոս կայսրի մայրը Հեղինէն գտել էր և պաշտամունքի առարկայ էր դարձել բոլոր քրիստոնէաների համար:

628 թ. բիւզանդական զօրքերը

Հերակլ կայսրի գլխաւորութեամբ խաչափայտը վերադարձնելու համար պատերազմեցին պարսիկների դէմ:

Տիրոջ օգնութեամբ բիւզանդացիները յաղթեցին: Ս. Խաչը հանդիսաւոր թափօրով տեղափոխւեց հայոց Կարին քաղաքը, իսկ Կարինից այն տեղափոխւեց Կ. Պոլիս, ապա Երուսաղէմ: Գերեզարծի ճանապարհին Տիրոջ խաչափայտը բարձրացւեց և ցնծաց ժողովուրդը:

Ինչպէս գիտենք Յիսուսը խաչի վրայ ցոյց տւեց իր անհուն սէրը մարդկութեան հանդէպ, և խաչը դարձաւ մեզ համար յոյսի, սիրոյ և փրկութեան երաշխիք:

Մենք ևս հայ առաքելական եկեղեցու զաւակներս այս սուրբ տօնը նշեցինք Սեպտեմբեր 16-ի առաւօտեան բոլոր եկեղեցիներում, իսկ կէսօրից յետոյ բոլորս հաւաքւեցինք Թեհրանի Արարատ մարզաւանի Ս. Խաչ մատուռը տօնելու համար աւանդական Ռեհանօրհնէքի արարողութիւնը: Ս.

Պատարագը մատուցումից յետոյ Հոգեշնորհ Տ. Մակար Վրդ. Աշգարեանը տւեց իր պատշաճ քարոզը, ապա հաղորդութեան կարգից յետոյ կատարւեց Ռեհանօրհնէքի անդաստանը, և վերջում օրհնւած Ռեհանը բաժանւեց ժողովրդի մէջ: Իսկ ինչո՞ւ են օրհնում Ռեհանը:

Ռեհան գործածելու սովորութիւնը Ս.Խաչվերացի տօնին խաչափայտը զարդարելու համար էր: Ռեհանը, որպէս բոյս, ունի անուշահոտ բուրմունք եւ մշտադաւարութիւն նրա մէջ կայ յատուկ խորհրդանիշ Քրիստոնէութեան յաւերժականութեան եւ բուրումնաւէտութիւնը յաւիտենական կեանքին:

Կրկին սովորութիւն է դարձել ծխատը քահանաները այցելում են իրենց ծխում բնակող այն ընտանիքների տները որոնց անունները համընկնում են նոյն տօնին:

*Արփիկնէ Սինանեան*

# «ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹԸ ԱՆԳՐԱԳՐԻՆ Ե ԻՐԱՆԱՅՅ ԷՊԻԿ ՄԵՆՏՐԱԲԵՆՆԻ ԼԵԶԻԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԵՐԸ ՊԱՐՍԿԵՐԷՆ ԼԵԶԻՈՒՄ

Ինգա Պետրոսեան

Իրանում պարսկերէն լեզուով տպագրուած «Իրանահայերը» գիրքը կարդալուց յետոյ մանկավարժ Էդիկ Մեհրաբեանը սկսել է ստուգաբանել հայերէնում ու պարսկերէնում առկայ նոյնիմաստ եւ նոյնահունչ բառերը: Դրդապատճառը ստուգաբանութիւնն ինքնուրոյն սկսելու համար հանդիսացել են հայերէն «դժար», «անգամ» ու «անդամ» բառերը, որոնք նա գտել է «Իրանահայերը» պարսկերէն գրքում:

Սկզբում հաշուել է նման բառերի քանակը, յետոյ անցել բացառչութիւններին, իսկ յետոյ՝ ստուգաբանութեանը նկրել տարիներ, սակայն աշխատել ինքնուրոյն, առանց լեզուաբանների օգնութեան ու միջամտութեան: Ինքն էլ մասնագիտութեամբ լեզուաբան չէ, ապրում է Թեհրանում, որտեղ «Մարիամ հաստատութիւն» կըրթօջախում զբաղուում է մանկավարժական գործունեութեամբ արդէն 15 տարի:

Շնորհիւ պարսկերէն լեզուի լաւ իմացութեան, Էդիկ Մեհրաբեանը, նման իմաստներով ու միեւնոյն արմատներով հայերէն ու պարսկերէն բառեր գտնում է նաեւ պարսկական գրականութեան մէջ, դրանց առնչութիւնները համեմատում անգամ զաւառական բառարաններում: Նրա աշխատանքն անկատ չի մնում, Իրանում արձագանքներ ստանում է, թէեւ դրանք լինում են սակաւ:

Օրինակ՝ «Ֆարհանգեսթանի» (Իրանի լեզուի ու գրականութեան բարձրագոյն կենտրոնի) մասնագետները խուսափել են բացայայտ ասել՝ Էդիկ Մեհրաբեանի ստուգաբանութիւնները, ի վերջոյ, ճշմարտացի՞ են, արժէք ունե՞ն, թէ՞ ոչ: Սակայն խուսափելով հանդերձ՝ Ֆարհանգեսթանում նրա 2

յօդուածը տպագրել են: Դրանցից մէկը եղել է «Հայոց լեզուի դերը պարսկերէնում» թեմայով, զուգակիցս յօդուածում ներկայացրել է ականաւոր լեզուաբան Հրաչեայ Աճառեանի տեսակէտը պարսկերէն թարգմանութեամբ:

Իսկ միւս յօդուածը վերաբերել է պարսկերէն «թարքա» բառի մեկնաբանութեանը: «Թարքա» բառը կազմուած է «թար», որը նշանակում է թաց կամ թարմ, եւ «ռաքա»՝ նշանակում է ճիւղ, արմատներից, իսկ «թարքա» հայերէն թարգմանութեամբ նշանակում է թարմ ու դալար ճիւղ: «Ռաքա» բառը պարսկերէն լեզուընտանիքում օգտագործուում է նաեւ զաւակ իմաստով, յատկապէս Իրանի Գիլան քաղաքում: Էդիկ Մեհրաբեանը «թարքան» համեմատում է հայերէն «ծառի ճիւղ» բառերի ու «ճիւղագրութիւն» հասկացութեան հետ: Բառի ձեւափոխութիւնը հասել է մինչեւ թուրքերէն, որտեղ ճիւղ-ճիւղը դարձել է ճուճիւղ, ինչը թուրքերէնում նշանակում է զաւակ:

Մինչ այն ստուգաբանութիւնն իրանցի լեզուաբանները «թարքա» բառի բացատրութեանը դեռ չէին անդրադարձել: Ծանօթանալով զուգակիցս աշխատանքին՝ «Ֆարհանգեսթանի» մասնագետները խոստովանել են՝ «գտնուած փաստերն իրօք զօրեղ են»: Սակայն «Ֆարհանգեսթանի» վերաբերմունքն այսքանով սահմանափակել է, չնայած կենտրոնից դուրս իրանցի անկախ լեզուաբանները Էդիկ Մեհրաբեանի աշխատանքը, առհասարակ, համարում են բաւականին լուրջ:

Էդիկ Մեհրաբեանի ստուգաբանութիւնների մասին Թեհրանում տպագրել է նաեւ հայերէն ու պարսկերէն լոյս տեսնող «Հուլյս»

(«Յոյս») երկշաբաթաթերթում: Իրար նման բառերն ու արմատներն ուսումնասիրելիս զուգակիցս գտել է բազմաթիւ փաստեր, հետաքրքրական տուեալներ եւ նոյնիսկ հայերէն, պարսկերէն բառերին նման բառեր գտել եւրոպական լեզուներում:

Օրինակ՝ «կարել» բայի «կար» արմատը հայերէն բառարաններում վկայուած է մինչեւ 5-6, նոյնիսկ աւելի իմաստներով, պարսկերէնում եւս պահպանել են «կար» արմատի աւելի քան 5-6 իմաստները: Հայերէնում «կար» արմատի բուն իմաստը թելն ու թելից գործածքներն են: Պարսկերէնում «կար» նշանակում է ջուրը չընկած կտոր, ոսկէ թելերով գործածք (ըստ պարսկերէն «Նագեսթան-լաթեթա» բառարանի): Պարսկերէն «քարգահ» բառում, որը նշանակում է կտոր գործելու տեղ, «կար» արմատը դարձել է «քար»: Իսկ «քարթանաք» նշանակում է սարդ, սա եւս ունի քար կամ կար արմատը, նոյն բառն իրանական զաւառական բառարաններում նաեւ յիշատակում է որպէս «քարբաֆու», որը դարձեալ նշանակում է սարդ: «Քարբաֆու» բառը յատկապէս օգտագործում են Իրանի Քերման նահանգում: Էդիկ Մեհրաբեանը բացատրում է, որ սարդ բառը նոյնպէս կապուած է թել ու կար իմաստների հետ, քանի որ սարդն էլ իր հերթին գործում է սարդոստայն: Ջրուցակիցս գտել է, որ Իրանի Խորասան նահանգում (իր բնակչութեամբ ու տարածքով Խորասանը Իրանի ամենամեծ նահանգն է) սարդին ասում են «քարդաւանաք», ինչպէս տեսնում ենք «սա եւս ունի «քար» (կար) արմատը: Անդրադառնալով «ջուլիակ» բառին՝ զուգակիցս բացատրում է, որ

բառի «ջուլ» արմատը 2 լեզուներում էլ նշանակում է թել կամ կտոր:

Էդիկ Մեհրաբեանը 3. Աճառեանի բացատրական բառարանում գտել է, որ «կար» նաև նշանակում է մարմնի մասերի միացման տեղը, եւ այս արմատով կազմել են կարծիկ ու կռծիկ բառերը: Պարսկերէնում պահպանելով «կար» արմատը կարծիկին ասում են քարջան, քարքար», քերքերուկ ու քորքորա: Քանի որ գրուցակիցս լաւ տիրապետում է պարսկերէն լեզւին, օգտուում է նաեւ պարսկերէնի գաւառական բառարաններից ու ստուգաբանում նաեւ ըստ նահանգների ու գիւղերի:

Իմաստներով իրար նման ու միեւնոյն արմատներով հայերէն, պարսկերէն բառերի առնչութիւնները Էդիկ Մեհրաբեանը գտել է նաեւ եւրոպական լեզուներում. օրինակ՝ «քարփեթ» (carpet) անգլերէնում նշանակում է գորգ, ունի «քար» արմատն ու դարձեալ կապած է թելին ու գործելուն: Իսկ կարծիկին անգլերէն լեզուով ասում են «քարթիլիջ» (cartilage), սա նոյնպէս ունի «կար» արմատը, եւ իմաստով էլ նոյն է, ինչ պարսկերէն քարջանը կամ քարքարեն:

Պարսկերէնում փայտին ասում են փաթ, ինչպէս տեսնում ենք, ունեն նման հնչողութիւն: Հայերէնում ասում ենք փայտի գլուխ, այսինքն՝ չոր գլուխ, յիմար, պարսկերէնում չոր գլուխ փոխաբերական արտայայտութեան փոխարէն ասում են փաթախ, այս դէպքում էլ «փայտ» կամ «փաթ» արմատը պահպանուում է: Էդիկ Մեհրաբեանը օրինակ է բերում «լեզուն փաթ ընկաւ» արտայայտութիւնը, այստեղ «փայտը» դարձել է «փաթ», եւ արտայայտութիւնը նշանակում է լեզուն կապ ընկաւ: Աֆղաներէնում, որը եւս պատկանում է իրանեան լեզւաընտանիքին, ինչպէս պարսկերէնը, կապ ընկնելուն ասում են փաթել, այ-

սինքն՝ աֆղաներէնում եւս կա «փաթ» արմատը, որն ունի նոյն փայտի իմաստը:

Պահլաւերէնում փայտին ասում են փադաք, իսկ սիսթաներէն գաւառական լեզուում ու քրդերէնում ասում են փադաքի, 3 լեզուում էլ բառի իմաստը նոյնն է, իսկ «փաթ» արմատը դարձել է «փադէ»:

Միայն փայտ բառով իրանեան լեզւաընտանիքում ու հայերէնում պրն. Մեհրաբեանը գտել է մինչեւ 150 օրինակ, հետեւաբար բառերի նմանութիւնը չի կարող պատահականութիւն լինել: Նրա կարծիքով՝ դարեր առաջ, երբ ձեւաւորել են բառերը, մարդիկ տարիներով դրանք կազմելու վրայ չեն մտածել, բառերը ձեւաւորել են ժողովուրդները մարդկային շփումների ու սոցիալիզացիայի միջոցով ու մի արմատից ստացել են բազմաթիւ բառեր:

Բացի սոցիալիզացիայի ու ժողովուրդների շփումի ազդեցութիւնից՝ Էդիկ Մեհրաբեանը 2 լեզուներում իրար նման բառերի առկայութիւնը համարում է հետեւանքը նրա, որ պարսկերէնն ու հայերէնը երկուսն էլ սերել են հընդերոպական մայր լեզւից:

Հնդիրանական լեզւաընտանիքը հնդեւրոպական լեզւաընտանիքի կարեւոր ճիւղերից է, եւ իրանական լեզուներն ու հայերէնը սերել են միեւնոյն հնդեւրոպական մայր լեզւից, որը համարում է կորած լեզու: «Հետեւաբար, եթէ 2 լեզուներում կան նման բառեր, դա չի նշանակում, որ հայերն են փոխառել իրանցիներից, կամ հակառակը, այլ երկու լեզուները դրանք ժառանգել են հնդեւրոպական մայր լեզւից», ասում է Էդիկ Մեհրաբեանը, որը չնայած իր նւիրած ու տարիների աշխատանքին՝ չի համարում, որ ամէն բառ ու արմատ ստուգաբանել է անթերի ու անսխալ: Այնուամենայնիւ, կուզենար իր կատարածին ուշադրութիւն դարձնին ու

գնահատական տային նաեւ լեզւաբանները, որպէսզի ինքն էլ յըստակօրէն իմանար՝ ինչքանով է իր կատարածը կարեւոր ու ստոյգ:

3 տարի առաջ հայ լեզւաբանները նրանից ուզել են «կոթ» արմատով բառերի ստուգաբանութիւնը Հայաստանում՝ «Ուսուցիչ» թերթում տպագրելու համար, բայց առ այսօր չեն տպագրել:

Էդիկ Մեհրաբեանը, սակայն, շարունակում է աշխատել նոյն հետաքրքրասիրութեամբ, վերջերս էլ գտել է «կէզ» արմատով բառերի ստուգաբանութիւնը: Ողջակէզ ու հրկիզել բառերում «կէզ» ու «կիզ» արմատներն ունեն կրակ, այրոց իմաստները: Պարսկերէնում «կէզ»-ի նմանութեամբ կա «քեզ» բառը, որը նշանակում է բրդի այրւելը, իսկ այրած բրդի հոտը կոչւում է *բույեթեզ*: Զրուցակիցս գտել է, որ «կէզը» պարսկերէնում կիրառւում է նաեւ «չեզ» ու «ջեզ» ձեւափոխութիւններով, օրինակ՝ չեզունդան նշանակում է մէկի սիրտը դաղել, իսկ ջեզղալ՝ այրել, վառել, սեւանալ: Երկու դէպքում էլ կրակ, այրոց իմաստները պահպանուում են:

Անկախ մասնագէտների ցուցաբերած վերաբերմունքից՝ զրուցակիցս իր ստուգաբանութիւնները շարունակելու է: Վերստին ստուգաբանելու է այն բառերը, որոնք թել կամ 2 լեզուների արմատական ու բացատրական բառարաններում, բայց պարսկերէն կամ հայերէն չիմացողների մըտքով չի էլ անցնում, որ հարեւան երկրում եւս խօսում են նոյն բառերով, որոնք երկու լեզուներում էլ ունեն նոյն իմաստները:

*«Ազգ» օրաթերթ, 19 յուլիս 2012*

*Էդիկ Մեհրաբեանի աշխատանքների հետ ծանօթանալու համար, կարող էք կարդալ նրա յօդածները «Յոյս»-ի տարբեր համարների պարսկերէն բաժնում:*

«Յոյս» երկշաբաթաթերթի յարգելի խմբագիր  
Բարեւ Ձեզ:

Ձեզ գրում է Ռուբինա Օհանեան՝ Գլենդելից:

Թէև շուրջ հինգ տարի է, որ հաստատուել եմ Գլենդելում ու հեռու եմ իրանահայութիւնից, բայց կանոնաւոր՝ ամէն օր, հետեւում իրանին եւ իրանահայ գաղութին առնչող լուրերին: Ես ինձ բոլորովին հեռու չեմ գտնում ձեզանից, ու հարկ եմ համարում նշել որ կարդում եմ համարեա բոլոր թերթերն ու պարբերականները՝ այդ շարքում նաեւ «Յոյս» երկշաբաթաթերթը:

«Յոյս»-ի բոլոր միւթերին ու արծարծող բոլոր հարցերին չի որ համարում եմ, ու դա բնական է, որ ամէն մի ընթերցող ունի իրաւունք՝ սեփական կարծիք ունենալու, ընդունելու, մասամբ ընդունելու կամ մերժելու որեւէ հարց ու մեկնաբանութիւն: Այդուամենայնիւ, բարձր եմ գնահատում հասարակական ու մշակութային տարբեր հարցերին պարբերականիդ մօտեցման եղանակը: Աւելի հետաքրքրուած եմ մշակութային միւթերով, որոնք մատուցում են սեղմ, դիպուկ եւ մղում առաջացնում իմ մէջ՝ էլ աւելին իմանալու համար կարողալ այդ միւթերի վերաբերեալ գրականութիւն: Այս գրութիւնով, նախ, ուզում եմ շնորհակալութիւն յայտել այդ առիթով:

Ձեզ գրելու գլխաւոր պատճառը, սակայն սա չի: Ուզում եմ Ձեր ուշադրութեանը յանձնել իմ համար անչափ կարեւոր մի հարց, որ երբեմն (եւ ոչ-յաճախ) նկատելի է «Յոյս»-ի էջերում: Եւ դա հայերէն լեզւամտածողութեան հարցն ու հայերէնով ճիշտ արտայայտուելու կարեւոր խնդիրն է:

«Յոյս»-ի թիւ 127 համարի (Յուլիսի 25, 2012) էջ 23-ում «Տնտեսուհու անկիւն» բաժնում Քաթրին Եաղուբիի կազմած գրութեան մէջ երկու անգամ գործածուել է «լւացել»-ը՝ «լւանալ» բայի փոխարէն: Ես չգիտեմ ե՞րբ եւ ինչպէ՞ս է մուտք գործել այդ սխալ արտայայտչաձեւը իրանահայութեան որոշ խաւի կամ որոշ մարդկանց մօտ: Ի՞նչ ասել է «մազերը դրանով լւացել» ու «եթէ ձեր մազերը լւացելու գործում»: Դա ինչպէ՞ս մտաւ իրանահայերի խօսակցական լեզուում, եւ ամենագարմանալին՝ մամուլի եւ գրականութեան մէջ, երբ կայ ճիշտը՝ «մազերը դրանով լւանալ» եւ «եթէ ձեր մազերը լւանալու գործում»-ը: Իմ կարծիքով որեւէ թերթ ու պարբերական ծանրակշիռ է ոչ-միայն իր շօշափած միւթերով, այլ նաեւ ճիշտ ուղղագրութեամբ (թելադրական սխալներ չունենալով) եւ ճիշտ արտայայտուելու ձեւով:

Կարեւորութեամբ պիտի շեշտեմ, որ այդպիսի սխալներ ու վրիպումներ «Յոյս»-ում շատ չկան, բայց եղածն էլ բացասական ազդեցութիւն է թողնում ընթերցողի մօտ, որ կարծում եմ կը հաստատուէ՝ ցանկալի չի:

Ծանօթ եմ սփիւռքեան պայմաններում, ներկայ մարդուժով թերթ իրատարակելու դժւարութիւնների հետ, բայց կարծում եմ ընթերցողի պահանջն ու ակնկալիքը՝ թերթը ըստ հնարաւորի անթերի ներկայացնելու համար, արդար, տեղին ու հասկանալի է:

Յաջողութիւն եմ ցանկանում Ձեզ,  
Ռուբինա Օհանեան  
Գլենդել  
Սեպտեմբերի 15, 2012

## ՀԱՅ ՎԵՐ ԵՒ

Հայաստանի քաղաքագիտական շրջանակներում Եւրասիոհրդարանի կողմից ադրբեջանցի մարդասպան Ռամիլ Սաֆարովի ներման եւ հերոսացման վերաբերեալ բանաձեւի ընդունումը չի դիտարկուում որպէս դիւանագիտական յաղթանակ, կամ այդ խնդրում Հայաստանի դիրքորոշմանը օժանդակող քայլ:

Եւս-ի պատգամաւորները այդ բանաձեւով դատապարտեցին Ադրբեջանի նախագահ Իլիամ Ալիեւի որոշումը՝ յայտարարելով, որ այդ քայլը կարող է էլ աւելի թէժացնել հայ-ադրբեջանական լարւածութիւնը, խորացնել անարդարութեան զգացումը եւ երկու ժողովուրդների միջեւ առկայ ջրբաժանը: Քաղաքագետ Նարեկ Գալստեանը նկատում է, որ Սաֆարովի արտայանձնմանը հետեւած միջազգային բոլոր արձագանքներն «անատան են»: «Առայժմ ոչ մի յայտարարութեան մէջ չի եղել մի կէտ, որ եթէ դուք [Ադրբեջանը] չկարողանաք հիմնաւորել ձեր գործողութիւնները, ապա մենք կը դիմենք այս կամ այն պատժամիջոցների: Ինչ վերաբերում է Եւս-ին, ապա այն՝ որպէս Եւրոպական միութեան կառավարման համակարգի մաս, ազդեցիկ չէ, այսինքն՝ նրա որոշումները պարտադիր չեն ԵՄ-ի գործողութիւնների համար», - ասում է Գալստեանը՝ յաւելելով, որ Ադրբեջանի աշխարհաքաղաքական դիրքի պատճառով պէտք չէ մեծ յոյսեր կապել միջազգային հանրութեան հետ: Ռազմավարական եւ ազգային հետազօտութիւնների հայկական կենտրոնի ղեկավար Մանւէլ Սարգսեանն էլ ասում է,

# ԼՈՒՇԱԲԱՆՆԵՐԸ ԳԺԳՈՂ ԵՆ ՍԱՖԱՐՈՎԻ ՀԱՐՅՈՎ ՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԱԾ ԲԱՆԱԶԵԻԻՑ

Սիրանյշ Գեորգեան



որ ԵԽ-ի բանաձևի մեջ դատապարտում չի տեսել: «Թեև մեր լրատվամիջոցները փորձեցին ներկայացնել, որ ԵԽ-ն դատապարտում է կատարածը, սակայն ես միայն ափսոսանք տեսայ կատարածի առնչությամբ», - ասում է փորձագետը, ով հնարաւոր չի

համարում, որ Սաֆարովի ներման համար միջազգային հանրութիւնը կարող է որել պատժամիջոց սահմանել Ադրբեջանի նկատմամբ: Ըստ Սարգսեանի՝ միջազգային հանրութեան վրայ յոյս դնելը Հայաստանի իշխանութիւնների կողմից քաղաքական պա-

տասխանատուութիւնից խուսափելու նման մի բան է: Փորձագետը կարծում է, որ արդիւնքների հասնելու համար Հայաստանն՝ ինքը, պէտք է յստակեցնի Ղարաբաղի հետ կապած մի շարք դիրքորոշումներ (օրինակ՝ Լեռնային Ղարաբաղի անկախութիւնը ճանաչելու հարցի վերաբերեալ): Կուսակիցին «Օրինաց երկիր» կուսակցութեան պատգամաւոր Յովհաննէս Սարգարեանն էլ համարում է, որ ԵԽ-ի բանաձեւը «սառոյցի կամ բետոն» պատմելի առաջին ճեղքածքն էր», որը, Հայաստանի հետեւողական աշխատանքի դէպքում, հնարաւորութիւն կը տայ համարժէք գնահատականներ ստանալ միջազգային հանրութեան կողմից: «Սա համարժէք գնահատական չէ, այլ սկսած գործի սկիզբն է», - ասում է Սարգարեանը:

Աղբիւր՝

[www.armenianow.com](http://www.armenianow.com)

## ՖՐԱՆՍԻԱՆ ԵՒ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆ Է ՅԱՅՏՆՈՒՄ ԱՐԲԵՋԱՆՈՒՄ ՍԱՖԱՐՈՎԻՆ ՆԵՐՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Երեքշաբթի Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարութիւնը մտահոգութիւն է յայտնել հայ սպային կացնահարած Ռամիլ Սաֆարովի համաներման վերաբերեալ՝ շեշտելով, որ այդ որոշումը կարող է «լրջօրէն վնասել բանակցային ջանքերին եւ կողմերի միջեւ վստահութեան մթնոլորտի հաստատմանը»:

Ադրբեջանական բանակի սպայ Ռամիլ Սաֆարովը 2004թ. Բուդապէշտում, ՆԱՏՕ-ի դասընթացներին սպանել էր 26-ամեայ հայ սպայ Գուրգէն Սարգարեանին: 2006 թ. Հունգարիայի դատարանը առանձնակի դաժանութեամբ կացնահարելու մեղադրանքով ցմահ ազատազրկման դատապարտեց Սաֆարովին, սակայն Օգոստոսի 31-ին նա արտայանձնեց Ադրբեջան եւ, հայրենիք ժամանելուն պէս, ներման արժանացաւ երկրի նախագահ Իլհամ Ալիեւի կողմից: Արտայանձնման որոշումը Հայաստանում զայրոյթի լուրջ ալիք բարձրացրեց, նախագահ Սերժ Սարգսեանի որոշմամբ խզեցին Հունգարիայի հետ դիւանագիտական կապերը, քննարկում է նաեւ Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման բանակցային գործընթացի հետագայ ճակատագիրը:

Աղբիւր՝ «Ազգ» օրաթերթ  
04.09.12

# ՀԱՅ ՏՊԱԳԻՐ ԳՐՔԻ

## ՀԱՅ ԳՐԱԿՐ ՄՇԱԿՈՅԹԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

Արամ Բարայեան

Այս տարի լրանում է հայ տպագրութեան ուղիղ 500 ամեակը: 1512 թականին, հեռաւոր Վենետիկ քաղաքում, լոյս տեսաւ հայերէն առաջին տպագիր գիրքը, որը կոչւում է «Պարզատումար»: Օրացուցային տիպի ժողովրդական մի գիրք է այդ: Գրքի տպագրիչը Յակոբ Մեղապարտն էր, առաջին հայ տպագրիչը: Այդքան վաղ ժամանակներում, Գուտենբերգի գիւտից մօտ 55-60 տարի յետոյ, հայերէն տպագիր խօսքի երեւան գալը խոշոր երեւոյթ էր հայ կուլտուրայի պատմութեան մէջ: Դրանով սկիզբ դրւեց Հայ ժողովրդի կուլտուրական կեանքի նոր դարաշրջանին:

Գիտենք, որ հայ ժողովուրդը դարեր շարունակ տառապել է օտարի լծի տակ: Սակայն, առանձնապէս շատ ծանր է եղել նրա վիճակը վերջին հինգ դարերում Թուրքիայի եւ Իրանի տիրապետութեան օրօք: Արեւելքի յետամնաց, աւատական այդ երկրները ոչ միայն ժողովրդի կեանքի ապահովութեան համար նւագագոյն պայմաններ չէին տալիս, որի հետեւանքով եւ շարունակուում էր հնուց արդէն սովորութիւն դարձած նրա արտագաղթը երկրից դէպի օտար հորիզոններ, այլեւ հնարաւորութիւն չէին ստեղծում մշակութային-լուսաւորական որեւէ աշխատանքի, այդ թւում եւ տպագրութեան: Այս պարագանե-

րում հայ ժողովրդից առանձին խրմբեր թողնում էին հայրենի հողը եւ օտար երկրներում էին փնտրում նրա պատմութեան պայմանները՝ լուսաւորական աշխատանքներ կատարելու համար:

Հեռաւոր վայրերում նրանք հիմնում էին տպարաններ, ստեղծում էին տպագիր գրականութիւն եւ այդ հեռաւոր կուլտուրայի օջախներից ջանք չէին խնայում իրենց ուժերը նւիրելու հարազատ ժողովրդի մշակութային-լուսաւորական գործին: Այս տեսակետից պատահական չէ, որ առաջին հայերէն տպագիր գիրքը լոյս ընծայւեց Վենետիկում եւ ոչ թէ հայերի հողում:

Միայն XVIII դարի վերջին քառորդում, հայերէն գրքի առաջին տպագրութիւնից մօտ 260 տարի յետոյ, մեծ դժարութեամբ հնարաւոր եղաւ կազմակերպել Էջմիածնում տպարան (1771 թ.) եւ նրան կից թղթի գործարան: Դրանով էլ սկսւեց տպագրական եւ հրատարակչական գործունէութիւն հայրենի հողում՝ Հայաստանում: Սակայն պէտք է ասել, որ



Հայ առաջին տպագրիչ՝ Յակոբ Մեղապարտը

մինչեւ սովետական կարգերի հաստատումը մեզ մօտ, տպագրութեան գործում առաջատարը շարունակեցին մնալ օտար երկրներում եղած հայ տպագրութեան օջախները:

Թէ ինչ աստիճանի է հայ ժողովուրդը սիրել գիրքը եւ ընդհանրապէս տպագրութեան մշակոյթը, ցոյց է տալիս այն ակնառու փաստը, որ դեռեւս XVII դ. առաջին կէսին, 1640 թականին, Ֆեոդալական Իրանի հեռաւոր անկիւններից մեկնում է Սպահանի մօտ գտնուող Նոր Ջուղա գիւղաքաղաքում հայերը առանց տպարան տեսնելու, եւ միայն հեռաւոր պատկերացում ունենալով տպագրութեան մասին, հիմնում են տպարան, որի մամուլը, տառերի փորագրումն ու ձուլումը, անգամ տպագրական թուղթը պատրաստում են իրենք՝ տնայնագործական եղանակով: Սկսում է բաւականին եռանդուն տպագրական հրատարակչական գործունէութիւն: Առաջինը, որ այդ տպարանում լոյս է տեսել, մեծածաւալ «Հարանց վարք» անունով գիրքն է (1641թ.), յետոյ «Խորհրդատետր»(1641 թ.) ապա՝ «Ատենի

# 500 ԱՄԵԱԿԸ



Hakob Meghapat, Libro del venerdi  
(1512, Venezia, tipografia D.I.Z.A.)

libro a stampa  
Venezia, Biblioteca dei Padri

Hakob Meghapat, Book  
(1512, Venice, D.I.Z.A. p.)

printed book  
Venice, Library of the Mekhitar



Հայ տպագիր գրքի տարածումը՝  
Պոլիս (1567), Միլան (1621),  
Նոր Ջուղա (1638),  
Ամստերդամ (1660),  
Մարսեյ (1672), Լոնդոն (1736),  
Էջմիածին (1771), մադրաս (1772),  
Կալկաթա (1796)

# ՈՐՆ Ե ՇԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԳԻ

## Գիտենքերգի Գիւղը

1439-ի շուրջ

## Յակոբ Մեղապարտի միջոցով հրատարակած առաջին գրքերը

1512

Ուրբաթագիրք

1513

Պարզատունարը (Եկեղեցական տօներ, երազացոյց...)

1513

Պատարագատետր

1513

Աղթարք

1513

Տաղարան (Միջնադարեան բանաստեղծների չափածոյ հանելուկների հաւաքածոյ)

## Նոր Ջուղայում հրատարակած առաջին գրքերը

1641

Յարանց վարք

1642

Ատենի ժամագիրք


## Եջմիածնում տպարան

1771

առաջին տպարան  
Յայաստանում

Յայ հնագոյն հրատարակութիւններից բանասիրութեան մէջ առաջինը յիշատակել է «Աղթարք»-ը 1865 թ, Ղ. Ալիշանի կողմից («Բազմավէպ», 1865, էջ 221): Այնուհետեւ, Գ. Ջարրիանաւելեանը իր «Յայկ. մատ.» մէջ նկարագրել է «Աղթարք»-ը եւ «Ուրբաթագիրք»-ը (վերջինս «Կիպրիանոս» վերնագրով): «Ուրբաթագրքի» մասին գրւած է, «Անթուական ամենահին տպագրութիւն, առանց նշանակութեան տեղւոյ, քաղաքի եւ հրատարակչի»: Առաջին անգամ Գ. Գովրիկեանը 1889թ. նկարագրելով Յակոբ Մեղապարտի

գիրք»-ը (վերջինս «Կիպրիանոս» վերնագրով): «Ուրբաթագրքի» մասին գրւած է, «Անթուական ամենահին տպագրութիւն, առանց նշանակութեան տեղւոյ, քաղաքի եւ հրատարակչի»: Առաջին անգամ Գ. Գովրիկեանը 1889թ. նկարագրելով Յակոբ Մեղապարտի



ժամագիրք»(1642 թ.): Փորձ են անում առաջին անգամ տպագրելու նաեւ հայերէն «Աստուածաշունչը»:

Նոր Ջուղայի տպարանը, ինչպէս եւ այնտեղ տպագրւած գրքե-

րը եղել են ոչ միայն Իրանում, այլեւ ամբողջ Մերձաւոր Արեւելքում առաջին տպարանն ու առաջին տպագիր գրքերը:

Շատ ուրիշ առաջաւոր ժողովուրդների հետ միասին հայ ժողո-

վուրդը իրաւունք ունի հպարտանալու իր հարուստ գրականութեամբ: Ուղիղ չորս եւ կէս դարի պատմութիւն ունի հայ տպագրութիւնը: Այդ ժամանակայ ընթացքում հայ ժողովուրդը ստեղծել է

# ՐՔԸ՝ «ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ»-Ը ԹԷ՛ «ՈՒՐԲԱԹԱԳԻՔ»-Ը

«Պարզատումար»-ը, նրա տը-պագրութեան թւականը համարեց 1512-ը յենւելով բնագրի սկզբում նշած օրացուցային 961 թւակա-նի վրայ («Հանդէս ամս.», 1889, էջ 209-212): Գ. Գալեմբեարեանը, ամփոփելով հնագոյն հրատարա-կութիւնների մասին եղած նիւթե-րը, ամենահին հրատարակութիւ-նը համարեց «Պարզատումար»-ն այն նկատառումով, որ «Ուրբա-թագիրք»-ն սկսւում է զարդագը-րով, իսկ «Պարզատումար»-ը սո-վորական երկաթագրով («Հանդէս ամս.», 1890, էջ 161-163):

Հետագայում յայտնաբերւեցին Յակոբի տպագրած «Տաղա-րան»-ն ու «Պատարագատետր»-ը: Վերջինս Յակոբ Մեղապարտի հրատարակած գրքերից միակն է, որ ունի հիշատակարան, որտեղ նշած է գրքի տպագրութեան թւականը 1513, վայրը Վենետիկ եւ տպագրիչի անունը Յակոբ: Տ. Պալեանը, հիմնւելով Գ. Գալեմբեարեանի վերոյիշեալ կարծիքի վրայ, կազմեց Յակոբի այդ գրքե-րի ցուցակը («Հանդէս ամս.», 1894, էջ 360-361), ըստ հրատա-րակման հերթականութեան առա-ջին «Պարզատումար», 1512, երկ-րորդ «Պատարագատետր», այ-նուհետեւ «Ուրբաթագիրք», «Տա-ղարան» եւ «Աղթարք» (մնացած չորսը 1513 թ.):

Հայ հնագոյն հրատարակու-թիւնների տպագրութեան այս ժա-մանակագրութիւնը ընդունւեց եւ դարձաւ աւանդական տեղ գտնե-

լով հետագայ շատ ուսումնասի-րութիւնների մէջ: Ռ. Իշխանեանը գտնում է («Բանբեր մատենադա-րանի», 1964, N 7, էջ 275-295, եւ N 8, էջ 183-189), որ Յակոբ Մե-ղապարտի անունով յայտնի, մեզ հասած հնագոյն հրատարակու-թիւններից առաջինը տպագրւել է ոչ թէ «Պարզատումար»-ը, այլ «Ուրբաթագիրք»-ը, եւ որ «Պար-զատումար»-ի սկզբում զարդագը-րի բացակայութիւնը պայմանա-ւորւած է միայն այն բանով, որ նրանում գլխատառ Ա-ն ոչ թէ տա-ռի, այլ թւանշանի դեր է կատա-րում, իսկ Յակոբ Մեղապարտի գրքերում թւանշանները, որպէս կանոն, զարդագրով չեն տը-պագրւած: Հնագոյն այս հրատա-րակութիւնների մէջ էջախորագրե-րի համար օգտագործւած են տարբեր ոճի գծագրութիւններ ու-նեցող շրջանակների երեք խըմ-բեր «Ուրբաթագիրքի» մէջ գործած-ւած է շրջանակների մի խումբը միայն, որն առկայ է նաեւ «Աղ-թարք»-ում, սակայն մի շարք նկատելի վնասւածքներով: «Աղ-թարք»-ի մէջ գործածւած է շրջա-նակների երկու խումբ, որոնք կան նաեւ «Պարզատումար»-ի եւ «Տաղարան»-ի մէջ, ընդ որում, այս վերջիններում չկան «Ուրբա-թագիրքի» մէջ գործածւած շրջա-նակները: Բացի դրանից, «Պար-զատումար»-ի շրջանակները անվնաս են «Աղթարք»-ում, մա-սամբ վնասւած «Պատարագա-տետր»-ում եւ աւելի վնասւած

«Տաղարան»-ում: Երուսաղէմից ստացւած «Պատարագատետր»-ի ամբողջական մանրաժապաւէնը պարզ դարձրեց, որ այդ գրքում, ինչպէս եւ «Աղթարք»-ում օգտա-գործւած են թէ՛ «Ուրբաթագիրքի» 8 եւ թէ՛ «Պարզատումար»-ի 16 շըր-ջանակները, ընդ որում, «Ուրբա-թագիրքի» մի քանի շրջանակներ յայտեղ աւելի քիչ են վնասւած, քան «Աղթարք»-ում: Դրանից էլ պարզ դարձաւ, որ «Պատարագա-տետր»-ը «Աղթարք»-ից առաջ է տպագրւել: Ըստ այդմ էլ որոշւեց մեզ հասած հայկական հնագոյն հրատարակութիւնների տպագըր-ման յաջորդականութիւնը «Ուր-բաթագիրք», «Պատարագա-տետր», «Աղթարք», «Պարզատու-մար», «Տաղարան»:

«Ուրբաթագիրքի» մէջ կայ մի յաւելեալ մանուկ Վասն գանի վերնագրով, համարակալւած ԳԳ: Գրքի տարբեր օրինակներում այն տեղադրւած է տարբեր մանուկնե-րի միջեւ (Հանր. գրադարանի օրինակում Զ եւ է մանուկների մի-ջեւ է):

*Տեղեկութիւնները՝ «Հայաս-տանի ազգային գրադարան»-ի կայքից*

ոչ միայն հարուստ ինքնուրոյն գրականութիւն, այլեւ թարգմանել է մայրենի լեզուով գիտութեան եւ գրականութեան համաշխարհա-յին դասական հեղինակներին: Հայերէն լոյս են տեսել Արիստո-

տելի, Պլատոնի, Ցիցերոնի, Սենե-կայի, Թուկիդիտի, Քսենոֆոնի, Տակիտոսի, Սալիստոսի, Հոմե-րոսի, Վիրգիլիոսի, Սոֆոկլեսի, Եւ-րիպիդեսի, Ֆիրդուսու, Դանթի, Խայեամի, Տաստյի, Շեքսպիրի,

Սերւանտեսի, Վոլթերի, Մուլիերի, Հիւգոյի, Գեթէի, Շիլլերի, Տոլս-տոյի, Պուշկինի, Լերմոնտովի, Գո-գոլի, Տուրգենի, Գորկու, Չեխո-վի եւ շատ ուրիշների երկերը: Հայ տպագրութեան միջոցով



մարդկութեան սեփականութիւնը դարձաւ որոշ յոյն եւ լատին դասական հեղինակների այն երկերը, որոց բնագրերը կորել են, իսկ նրանց հայերէն թարգմանութիւնները, որ կատարել էին հինգերորդ դարում, մնացել էին եւ հասել մեր ժամանակները:

Յայկական տպագրութեան առաջին օջախ՝ Վենետիկից յետոյ, հետզհետէ տպագրութեան օջախներ են ստեղծուում Կոստանդնուպոլսում, Յռոմում, Նոր Ջուղայում, Ամստերդամում, Փարիզում, Մարսելում, Լիվոռնոյում, Չմիւռնիայում, Լոնդոնում, Մադրասում, Կալկաթայում, Թրիեստում, Պետրզբուրգում, Նոր Նախիջեւանում, Յաշտարիխանում, Վիեննայում, Սոսկայում, Թիֆլիսում, Երուսաղէմում, Թեոդոսիայում եւ այլ հայկական գաղութներում:

Աշխարհի համարեա բոլոր երկրներում գոյութիւն են ունեցել հայկական տպագրութեան օջախներ: Նրանց ցանցը տարածուում է Ամերիկայից մինչեւ Ճաւա, Եգիպտոսից մինչեւ Շւեդիա: Այդ օջախների թիւը հասնում է մի քանի հարիւրի, որոնցից մօտ երեք տասնեակը հանդիսացել են խոշոր կուլտուրական օջախներ: Կանգ չառնելով բոլոր օջախների պատմութեան ու նրանց ունեցած գործունէութեան վրայ այստեղ մենք կը տանք ընդհանուր ծանօթութիւններ միայն մի քանի կարեւորագոյն օջախների մասին:

Ինչպէս վերը նշուեց հայ տպագրութեան օրրանը եղել Իտալիայի Վենետիկ քաղաքը: Դեռեւս Կիլիկեան հայկական իշխանութեան օրերից (XI-XIVդդ.) հայերը առեւտրական սերտ կապ են ունեցել Վենետիկի հետ:

Մինչեւ հայերէն առաջին գրքի տպագրութիւնը, Վենետիկում երկար ժամանակ գոյութիւն ունէր հայկական գաղութ: Առաջին գրքի տպագրութիւնից յետոյ դեռեւս երկար ժամանակ այդ գաղութը նշանակալից դեր է կատարել հայ իրականութեան մէջ: Իսկ 1717 թիւն, երբ XVIII դարի հայ ակա-

նաւոր լուսաւորիչ Մխիթար Սեբաստացին իր միաբանութիւնը փոխադրում է Վենետիկի Ս. Ղազար կղզին, Վենետիկը այնուհետեւ դառնում է հայ տպագրութեան խոշորագոյն օջախներից մէկը:

Վենետիկը առաջին քաղաքներից մէկն էր, որտեղ դեռեւս 1469 թւից մուտք էր գործել Գուտենբերգի անմահ գիւտը: Եւ այն ժամանակ, երբ լոյս տեսաւ Յակոբ Մեղապարտի «Պարգատումարը», Վենետիկում գործում էին արդէն երկու հարիւրից աւելի տպարաններ, լոյս էին տեսնում շատ լեզուներով գրքեր: Մեր առաջին տպագրիչ Յակոբ Մեղապարտը չէր կարող անտարբեր մնալ այդ ժամանակակից Վենետիկի տպագրական ու հրատարակչական եռուզեռի, ժողովրդի զարգացման գործում տպագրութեան ունեցած խոշոր դերի նկատմամբ: Նա եղաւ առաջինը մեր իրականութեան մէջ, որ օգուտեց մարդկութեան ստեղծած հանճարեղ այդ գիւտից՝ անմահացնելով իրեն մեր մշակութի պատմութեան մէջ:

Տպագրիչ Յակոբ Մեղապարտը, որ հաւանաբար ունեցել է եւ իր գործակիցները, հայկական բոլորագիր հիման վրայ ստեղծում է հայերէն տպագրական տառեր եւ 1512թ. տպագրում է իր «Պարգատումարը» որը ինչպէս նշուեց, ժողովրդի գործածութեան համար մի հրատարակութիւն է: Նրա մէջ ցոյց են տրւած եկեղեցական տօները եւ, բացի դրանից, ինչպէս սովորաբար լինում էր այդ ժամանակ, բովանդակում է նոյնպէս մեկնաբանութիւններ, հետեւեալ ենթաբաժիններով՝ «Կաղանդացոյց», «Նշանացոյց», «Երագացոյց», «Ծննդեան տղայոց» եւ «Մարմնախաղաց»:

Տպագրիչ Յակոբ Մեղապարտը հետեւեալ 1513 թականին նոյն տպարանում տպագրում եւ հրատարակում է չորս անուն ուրիշ գրքեր, դրանք են «Պատարագատետր», «Ուրբաթագիրք», «Աղթարք» եւ «Տաղարան»: Սրանք են հայ տպագրութեան երախայրիքը՝ հայերէն առաջին

տպագիր գրքերը: Այդ հրատարակութիւնների շարքում առանձնապէս ուշադրութեան արժանի է վերջինը՝ «Տաղարանը», որը մի ժողովածու է եւ բովանդակում է մեր միջնադարի բանաստեղծներ Յովհաննէս Թլկուրանցու, Ֆրիկի, Մկրտիչ Նաղաշի տաղերը, ինչպէս նաեւ Ներսէս Շնորհաւու 137 չափածոյ հանելուկները:

Հայ առաջին տպագրիչ Յակոբ Մեղապարտի հրատարակչական գործունեութեան զնահատմամբ հարցում իրաւացի չեն եղել մեր որոշ բանասէրները պահանջելով, որ նա իր այդ հրատարակութիւնների բովանդակութեան (մասնաւորապէս «Աղթարքի» եւ «Ուրբաթագրքի») համար կանգնի «հասարակական դատարանի» առաջ: Եթէ համեմատում ենք Յակոբի հրատարակութիւնները այդ ժամանակակից եւ նոյնիսկ դրանից յետոյ ուրիշ ժողովուրդների առաջին տպագրութիւնների հետ, տեսնում ենք, որ վերջիններս իրենց տպագրութեան առաջին շրջանում հրատարակել են միայն կրօնական ու եկեղեցական գրքեր, շատ յետոյ միայն աշխարհիկ բովանդակութեամբ գրքեր: Յայտնի է, ռուս առաջին տպագիր գիրքը լոյս է տեսել 1564 թւին: Այդ առաջին գրքից մինչեւ XVII դարի երկրորդ կէտը տպագրել են բացառապէս կրօնա-եկեղեցական գրքեր՝ Աւետարաններ, գործ առաքելոցներ (ապոստոլներ), ժամագրքեր, խորհրդատետրեր եւ այլն:

Առաջին գիրքը, որ իր բովանդակութեամբ կիսաեկեղեցական եւ կիսաաշխարհիկ է, տպագրել է 70 տարի յետոյ 1634 թականին: Իսկ մաքուր աշխարհիկ բովանդակութեամբ առաջին գիրքը տպագրել է 1647 թականին:

Մինչդեռ, Յակոբ Մեղապարտի հրատարակութիւնները, բացի մէկից («Պատարագատետր»), եղել են ժողովրդական, աշխարհիկ բնոյթի գործեր: Ինչ վերաբերում է «Ուրբաթագիրք»-ին եւ «Աղթարք»-ին, մասամբ եւ «Պարգատումար»-ին, որոնց բովանդակութիւնը, ինչպէս ասում են մեր բա-



Նոր Ջուղայի տպարանի հիմնադիր՝ Խաչատուր Կեսարացի

նասերներից ոմանք, «յետադիմական», «սնոտիապաշտական» է, որի համար եւ դատապարտում են նրան, ճիշտ չեն: Մեր կարծիքով, նման բովանդակութեամբ ժողովրդական գրքերի հրատարակութիւնը տպագրիչի կողմից սուրբ է եղել իր ժամանակին, ժողովրդի պահանջներին: Յակոբ Մեղապարտից շատ յետոյ էլ, անգամ մինչեւ մեր դարի 20-ական թականները հայերէն գրքեր էին տպւում երագահանով, վիճակախաղով եւ այլն, բայց ոչ ոքի մտքով չէր անցնում նման գրքերի հեղինակներին եւ դրանց տպագրիչներին «հասարակական դատարանի» առաջ քաշել: Վերջապէս միայն «Տաղարանն» էլ բաւական է, որ մեր առաջին տպագրիչը իր հրատարակչական գործունեութեամբ դասւի մեր կուլտուրայի առաջադէմ ներկայացուցիչների շարքը:

*Աղբիւր՝  
հատուած «Հայ տպագիր  
գիրքը եւ տպագրութիւնը» գրքից,  
Երեւան, 1963, չնչին  
խմբագրութեամբ*

## ԷԴԻԱՐԴ ՆԱԽՎԵՐԳԵԱՆԻ ՆՈՐԱՏԻՊ ԳՆՈՒՆ ԵՄ ԷՏԻՒԴԻ

### ԳՐՔԻՉ



\*\*\*

Գնում եմ Էտիւսի  
ոլորապտոյտ ճանապարհով  
իջնում եմ ձորը

Մէջքը ցցում  
առողջ ցուլի պէս  
հիմ կամուրջը  
կանգնած է գետի մէջտեղում

Գետը  
թիկնապահ ծառերի ուղեկցութեամբ  
արքայավայել  
համդարտ ու խաղաղ  
իր հեռաւոր աթոռանիստը

Դիմացս  
հեռում  
ժայռերից կառչած  
ծառերը  
ամուր գրկած  
գիւղական մի քանի տեսակ  
կախել են ձորից  
ու նայում են մշտափոփոխ հրաշքին

Թռչկոտելով քարափների վրայով  
մօտենում են  
գետի մէջ ցցւած  
անհնազանդ  
չնկարող փշատներին

Կամաց  
կամաց  
ձգում են Արարչի շունչը  
նշմարում են  
Սոհրաբի տեսած ոտնահետքերը

Ժայռերի մօտ  
մի մեծ թզենու տակ  
նստած է Աստուած  
ծայնում է  
-յոզնեցի վերեւներից  
երբեմն ուզում եմ Մարդ լինել

Բացում եմ էտիւդնիկս

ու մտածում եմ  
«ժերուկը ցնդել է  
կամ էլ խօսք է քաշում  
երեւի չի պատկերացնում  
Մարդ լինելու դաժանութիւնը»  
ժպտում է  
-ուզում եմ ձեզ նման վայելել

Ներկայանալի վրայ  
գոյները շուրջպար են բռնել

«Կեանքը միայն վայելք չէ»

-Թէկուզ  
ասում եմ  
հիմա մի քանի րոպէ անշարժ մնա  
ուզում եմ դիմանկարդ յաւերժացնել

Նկարում եմ  
նկարում եմ երկինքը  
ժայռերը  
թզենին  
գետի ջրերում լողացող արեւին  
խմում եմ ծիրանի օղի ու  
մտածում եմ  
«Մարդը երբեմն կարող է աստուածանալ  
բայց դու  
Աստուած իմ  
դու  
դատապարտուած ես միշտ Աստուած մնալ»

-Լաւ  
ասում է Աստուած  
ձեզանից պրծում չկայ  
ցոյց տուր նկարդ

Ասում եմ  
-յաջող չստացւեց

-Ոչինչ  
ասում է Աստուած  
կարելորդ արարման խորհուրդն է  
եթէ ինչ-որ բան թերի է մնացել  
տանը կը նայես հայելուն  
ու կաւարտես  
դիմանկարս

Դէ ես գնացի  
-Ուր ասում են  
ժպտում է  
գնում են էտիւդի

\*\*\*

Վառեցի  
այգուս չորացած խոտերը  
բոյրը անուշ էր  
յուշեր արթնացող  
միայն չիմացայ  
քանի մրջին ու միջատ  
իմ հրավառութեանը  
զոհ դարձան

### ՄԱՀԻԱՆ ՀԵՐԹ

Ցուրտ ու խաւար տարիներին  
հերթի են կանգնել  
հացի համար  
նաւթի համար  
ջրի համար  
եւ

Մշտապէս տուն են վերադարձել  
ձեռնունայն ու գլխիկոր  
խեղճ ես խեղճ ասում էին տնեցիները

Էհ ինչ անեն  
ուզում էի  
հերթը հերթ լինի  
օրէնքը օրէնք,  
արդարութիւնը արդարութիւն...

Հիմա նորից  
ամէն օր  
հերթի են կանգնում  
մահւան հերթի  
եւ ամէն օր տուն են վերադառնում

Ձեռնունայն ու գլխիկոր  
բայց տնեցիներն ու ընկերներս չգիտեն  
ուր են գնում եւ  
իւնչի հերթ է  
վախենում են  
նորից նախատեն ու ասեն  
խեղճ ես խեղճ

Ասում են դրախտը համբերատարներինն է  
ասում են

\*\*\*

Կանգնեցի անդունդի եզրին  
Պարանի մի ծայրը ամրացրի հորիզոնի գծին  
իսկ միւս ծայրը օղակեցի պարանոցիս

Յիշեցի որ պարանը լւացքի պարան է  
որից կախած էր  
իրիկւայ սիւքից դողացող  
մաքուր սաւանները յիշողութեան

Ինչ լաւ է որ դու հեռու ես  
դու շատ հեռու ես  
եւ  
անդունդը լցւած է ծիրանի բոյրով  
եւ  
«Պէտք է հասնել հանդիպման վայրը՝  
ծառի եւ Աստծոյ...»:

### ԵՂԻՄԻՆ ԳՆԱԿԵՐԴԵԱՆ

#### ՀՐԱՏԱՐԱԿԵԼ Ե

- 1-«**4-ը ապրիլի**» բանաստեղծութիւնների ժողովածու. 1992թ.«Տապան», Երեւան
- 2-«**Անառակ որդի**» բանաստեղծութիւնների ժողովածու, 1996թ.«Այբ-բեն», Լոս Անջելես
- 3-«**Իմ սիրաբը լեռներում չէ**» բանաստեղծութիւնների ժողովածու, 2002թ.«Այբ-բեն», Լոս Անջելես

#### ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1-«**Քոռ բու**» Իրանական պատմութիւնը եւ վիպակ 1992թ.«Տապան», Երեւան:
- 2-«**Մի այլ ծնունդ**» Ֆորուդ Ֆարրոյի բանաստեղծութիւնների ժողովածու, 1996թ.«Այբ-բեն», Լոս Անջելես
- 3-«**Կանաչ ծաւայ**» Սոհրաբ Սեփեհրի, բանաստեղծութիւնների ժողովածու, 2000թ.«Վան Արեւան» Երեւան
- 4-«**Փոքրիկ սիրտս ու՞մ նիւրեմ**», Իրանական ժամանակակից հեքիաթներ, 2000թ.«Վան Արեւան», Երեւան
- 5-«**Ձահակ**» Իրանական ժամանակակից դրամատուրգիա, 2003թ.«Աղբիւր» Երեւան.

- 6-«**Ոսկէ գմբէթ**» ժամանակակից Իրանական պոէզիա, 2005թ.
- 7-«**Մարգարէի արեւածագը**» Իրանական ժամանակակից պոէզիան/Իսլամական յեղափոխութիւնից յետոյ, 2006թ.«Հայաստան», Երեւան
- 8-«**Մուրք Դուրան**» հայերէն ամբողջական թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնը 2006-2007թթ.«Հայաստան» Երեւան.
- 9-«**Մասնաւի պատումներ**» Մոլաի 2007թ. Հայաստանում
- 10-«**Ղեյսար Ամինփոր**» բանաստեղծութիւնների ընտրանի, 2008թ. Հայաստան, Երեւան
- 11-«**Նազելի նոճին**» Իրանական հեքիաթներ, 2008թ.«Հայաստան» Երեւան.
- 12-«**Թարմ օդ**» Ահմադ Շամլու, բանաստեղծութիւնների ընտրանի, 2008թ.«Հայաստան» Երեւան.
- 13-«**Թեւերը թռից բանաստեղծութեան կողմն եւ հեռացաւ**» Վահէ Արմէն 2011թ.«Հայաստան» Երեւան.
- 14-«**Փողոցների Նաւաստին**» Շամս Լանգաբուդի, 2011թ.«Հայաստան» Երեւան:

## ԵՐԵՒԱՆԻ ԵՐԵՒԱՆԵՐԸ

Շրջեք Երեւանի փողոցները եւ արեւածաղկի կոճ վաճառող չքաւոր կանանց եւ մեքենաների վրայ տախտակ խաղացող տղանարդկանց կողքին կը նկատէք նաեւ երեւիսաների աչքառու ներկայութիւնը: Բազմաթիւ երեխաներ, վառ հայեացքներով, ուրախ, որոնք խաղում են քաղաքի ցանկացած փողոցում:

Երեւանի բնակարանային բլոկների միջեւ ընկած բակերը, ուր բոլոր բնակիչները ճանաչում են միմեանց, այս երեխաները խաղալու վայրն է: 2001 թւականի ամռանը, անգլերէն հայկական AIM ամսագրի լուսանկարիչ Վիրո Տէր Կարապետեանը, Թումանեանի 33-ում ընկերակցել է բակի երեխաներին եւ լուսնակրներ է նրանց, հնացած մեքենաների եւ աւերած պատերի միջեւ: Միջավայր, որ առանց նրանց ներկայութեան մռայլ տպաւերութիւն կը թողներ անցորդի վրայ, եւ որ նրանցով եռում է կեանքով:

ԱՄՆ-ի Բոստոնում հաստատուած լուսանկարիչ Տէր Կարապետեանը գրում է. «Երեխաները իրենց իւրովի անմեղութիւնն ունեն: կարծարատիպերը, փողոց ու ուժը դեռ չեն փչացրել նրանց: Նրանք ոչ ցեղ են հասկանում ոչ կրօն: Նրանք պարզապէս ապրում եւ խաղում են»:

Այս երեխաները հինակակնում անկախութիւնից յետոյ ծնւած ու աճած սերունդն են. նրանք հիմա երեւանի փողոցներում հանդիպած երիտասարդներն են: Նրանք սովետական շրջանում չեն ապրել եւ Երկրի ապագան կախուած է նրանցից:



*Լուսանկարները՝ Վիրո Տէր Կարապետեան*



# ՉՈՒՅՎԱԶԱՆԴԵՍՆԵՐ ՇԱՐԱՄԲԷՅԵԱՆԻ ԱՆԻԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Արմինե Մելիք-Իսրայելեան

## ԲՆՈՒԹԵԱՆ ՓՈԽԱԿԵՐ- ՊՈՒՄՆԵՐ...

Երեւանի Յովհաննէս Շարամբէյեանի անուան ժողովրդական ստեղծագործական կենտրոնում բացել էր «Երկխօսութիւն բնութեան հետ» խորագիրը կրող ինքնատիպ ցուցադրութիւնը, ուր ներկայացւած էր փորագրիչ Սուրէն Աւագեանի ինքնատիպ հաւաքածուն: Բնութեան փոխակերպումներ յիշեցնող փայտէ քանդակներն իրականում բնաստեղծ են, առանց մարդկային մտքի ըստեղծագործական միջամտումի: Հիմնականում ընկուզենի ծառի ելուստները հաւաքելն ու կեղեւազատելով արտասովոր գեղեցկութեամբ այս իւրայատուկ քանդակաշարքը հաւաքագրելը՝ Աւագեանի հիմնական զբաղմունքն է մօտ մէկ տասնամեակ: Նրա երկխօսութիւնը բնութեան հետ բաւականին արտասովոր պայմաններում սկսեց.

-Երկարատեւ հիւանդութիւնից յետոյ էր, մի կերպ ինքս ինձ ստիպեցի բակ դուրս գալ...Եւ հէնց այդ պահին երբ հայեացքս ընկաւ դիմացի ծառից կարծես ինձ նայող ելուստին՝ տարօրինակ ձգողականութիւն զգացի, մէջս նրան ծառից անջատելու ցանկութիւն ծնւեց: Ու այդ օրւանից արդէն ինը տարի է ինչ շարունակւում է իմ զրոյցը ծառերի հետ, - ասում է փորագրիչը, ում զգայական աշխարհը բացառիկ յարաբերակցութեան մէջ է բնութեան հետ: Ինքնատիպ քանդակաշարքը, որոնք ներկայացւած էին ցուցադրութեան մէջ պատկերային յստակ ձեւ ու բովանդակութիւն են

կրում իրենց մէջ. կանանց կիսանդրիներ, մարդկային դէմքեր, ռէալ եւ աքստրակտ մտածողութեան յստակ դրսեւորումներ պարունակող փայտեայ ելուստները իւրօրինակ մթնոլորտ են ստեղծում: Ինքնատիպ այս հաւաքածուն, որն օրաուր համալրւում է նոր ու մէկը միւսին չկրկնող բնաքանդակներով՝ հիմնականում ընկուզենու ելուստներից են, մշակման պրոցեսներ համարեա թէ չանցած, քանի որ ընդամենը ենթարկւում են հասարակ յղումի... Ակամայից յիշում ես հանճարեղ Միքելանջելոյի խօսքերը, երբ իր հրաշալի հրեշտակի քանդակով հիացած Պապին նկարագրում է իր ստեղծագործութեան հանդէպ ունեցած իր մօտեցումը՝ «Հրեշտակն այդ մարմարի կտորի մէջ էր թաքնուած, ես ընդամենը քարի աւելորդ մասերն են հեռացրել նրանից...»:

-Ընկուզենին յիշողութիւն ունի, նա ֆիքսում է մարդուն, - ասում է բնութեան իւրօրինակ «պեղումներով» հմայած փորագրիչը, ում համոզմամբ՝ բութեան զանձարանի դուռը ամէն մարդ իր բանալիով է բացում... Նայելով խնամքով յղկւած ու հաւաքագրւած այս բնաքանդակներին համոզւում ես, որ նրանց հեղինակի՝ Սուրէն Աւագեանի գտնւած երջանկութիւնը հէնց այս ինքնատիպ քանդակաշարքի մէջ է, որոնք մի օր կը զբաղեցնեն իրենց տեղը թանգարանում ու գուցէ՛ գիտութեան զարգացումների մի ժամանակահատուածում հնարաւորութիւն տան մարդ արարածին բացայայտելու եւ վերծանելու

բնութեան կողմից արւած այս հետաքրքիր «մեսիջ»- հաղորդագրութիւնները... Մարդկային ուղեղի յստակ քանդակ յիշեցնող բնաքանդակը, ուր չկայ մարդկային որելէ միջամտութիւն՝ վերը ասւածի յստակ սպասելիք է ներշնչում դիտողին, առաւել եւս, երբ հպուում ես իրենց հետաքրքիր էներգետիկ դաշտով օժտւած այս բնաստեղծ քանդակներից իւրաքանչիւրի հետ, որոնցից մէկը կնոջ կիսանդրի է ասես, միւսը՝ յայտնի ռուս պոէտի Ալեքսանդր Պուշկինի կիսանդրին, յաջորդը՝ կենդանակերպ նշան, մէկ ուրիշը՝ անտիկ շրջանի ֆիգուրատիւ քանդակ եւ այլն...

Սուրէն Աւագեանի հաւաքածուն բնութեան խորքային ծայների ու երկխօսութեան արձագանքն է, նրա բարձրաձայնումը այն մասին, որ աւարտ, վերջ եւ մահ չի լինում, գուցէ՛ փոխակերպւում, վերածնում ու նոր սկիզբ...

## « ՀՈՂԻ ԱՋՔԵՐՈՎ »

Անահիտ Զուվալակեանի ներկայացրած ստեղծագործութիւններով իր ինքնատիպ ցուցադրութիւնների շարքն է լրացնում Շարամբէյեանի անուան ժողովրդական արւեստի ստեղծագործական կենտրոնը, ուր «Հողի Աջքերով» խորագիրը կրող ցուցահանդէսը հայ կնոջ ստեղծագործ մտքի թռիչքի մասին է խօսում:

Յիսուներեքամեայ հայ կնոջ համար ստեղծագործելը ամենօրեայ պահանջ է, հոգու բարութիւնը տեսանելի ու շօշափելի դարձնող դրսեւորում, որի շնորհիւ առաջին հայեացքից

մեր առօրեայում հանդիպող թափօնները կարող են դառնալ մէկը միւսին երբեք չկրկնող ստեղծագործութիւններ, ինքնատիպ մտածողութեան ու երեւակայութեան արգասիքներ:

Մասնագիտութեամբ դեղագործ տիկին Անահիտի եւ նրա լուսահոգի ամուսնու երազանքն էր ծովային աշխարհի յիշեցնող խորտկարան կառուցել, ուր ինտերիերն ամբողջապէս ջրային աշխարհի գեղեցկութիւնն ու հմայքն էր կրելու:



Գնեցին բաւականին քանակութեամբ խխունջներ եւ այլ ծովագոյացութիւններ, որոնք տիկին Անահիտի շնչի տակ պիտի կենդանացնէին ամուսինների հետաքրքիր երազանքը... Աւաղ, ժամանակն ու ճակատագիրը այլ ընթացք կանխորոշեցին... Ամուսնու մահուանից յետոյ տիկին Անահիտը սկսեց ստեղծագործել, խխունջէ գորգեր, լուսամփոփներ, զարդատուփեր ու զարդեր եւ այլ կիրառական առարկաներ պատրաստել, իսկ ստեղծագործ միտքը նիւթի սպառումի առջեւ չնահանջեց եւ արդէն մէկ տասնամեակից աւելի է, որ նա զարմացնում է իր դիտողին իր շնորհալի աշխատանքներով ու

ինքնատիպ մտածողութեամբ: Բանջարեղէնների կեղեւներ, մրգերի կորիզներ ու բնամթերքի այլ ոչ պիտանի մի հսկայական թափոնային զանգուած հասարակ չորացումից յետոյ Ջուլվալակեանի ձեռքերով դառնում է կոմպոզիցիա, ասելիք ունեցող մի ինքնատիպ կոլաժ: Սմբուկի, դոմի ու սոխի չորացած կեղեւներով ծաղկային կոմպոզիցիաները, դեղձի, ծիրանի, ընկոյզի ու բալի կորիզներով կոլաժաքանդակները Անահիտ Ջուլվալակեանի ներաշխարհից եկող արծագանքներ են, ինչպէս ինքն է ասում «Այս աշխատանքները նոր խօսք են, զարմանալի ու հետաքրքիր խօսք, նաեւ վկայում

են այն մասին, որ բնութեան մէջ ոչ պիտանի ոչինչ չկայ...»: Իւրայատուկ ցուցահանդէսի հեղինակը հայկական մրգերի կորիզներով հսկայ ծառի ստեղծման մի նոր ու համարձակ երազանք ունի, որը աշխատատար լինելուց զատ իր արւեստի հանդէպ անսահման նւիրում ու սեր ունեցող հայուհու ստեղծագործական համարձակութեան նոր շունչն է դառնալու վստահաբար:

## ԻՐԱՆԻ 44-ՐԴ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ

Արման Տ.Ստեփանյան



**Հ**ամահայկական խաղերը իրանահայ կեանքում համարվում են ամենակարեւոր մարզական իրադարձութիւնը: Այն մարզական մրցութիւնն է, որ իր մէջ է ընդգրկում Իրանի բոլոր հայկական գաղութները: Այսպիսով ամէն տարի ամռան վերջին շաբաթը բոլոր հայկական գաղութներից ժամանած մարզիկները, տարբեր մարզաճիւղերում մրցում են միմեանց հետ: Ընհակառակ Հայաստանում կայացող համահայկական մարզական խաղերը, որում մասնակցում են աշխարհի բոլոր կողմերից ժամանած հայ մարզիկ եւ մարզկուհիները ներկայացնելով իրենց քաղաքը, Իրանի համահայկական խաղերում կարգն այլ կերպ է: Այս մրցութիւններում իրանահայ գաղութի իւրաքանչիւր միութիւն իր մարզիկներն է ներկայացնում այս խաղերին: Մրցութիւնները համաձայն անցեալ տարիներին տեղի են ունենում Իրանի մայրաքաղաք՝ Թեհրանի ամենամեծ մարզամշակութային կազմակերպութեան մէջ՝ «Արարատ» մարզաւանում: Այս տարի մրցութիւնների 44-րդ շրջանն էր, եւ չնայած իրանահայ համայնքի առջեւ ծառայած բոլոր խնդիրների, մրցութիւնները տեղի ունեցան շատ բարձր որակով: Դրանից բացի կարելի է նշել նաեւ արդէն մի քանի շրջան

տեղ ընկած երեւոյթի մասին՝ դա Հայաստանից հրաւիրող մագրկիների ներկայ գտնւելն է այս մրցութիւններին: Այս շրջանի մրցութիւնները տեւեց մէկ շաբաթ՝ Սեպտեմբերի 13 մինչեւ 20-ը: Բացման արարողութիւնը կատարեց Սեպտեմբեր 13-ի երեկոյեան ժամը 7:30-ին «Արարատ» մարզաւանում: Բացման հանդիսաւոր արարողութեանը ներկայ էին Թեհրանի հայոց թեմի առաջնորդ՝ Տէր Սեպուհ Արք. Սարգսեանը, Իրանի Իսլամական հանրապետութեան՝ խորհրդարանում իրանահայութեան պատգամաւոր՝ Պրն. Կարէն Խանլաեանը, Իրանում Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Պրն. Գրիգոր Առաքելեանը, Արարատ մարզաւանի նախագահ՝ Պրն. Խալոյեանը, եւ շատ ուրիշներ: Բացմանն էին հրաւիրել նաեւ Վարդան Վարդանեանը եւ դոկտ. Հասան Ղաֆուրի Ֆարդը: Վերջինս իր ելույթում նշեց թէ չնայած որ ամառայ վերջին շաբաթը բոլոր իրանցիները ցանկանում են անց կացնել Իրանի հիւսիսային շրջաններում, սակայն ես այս օրերին միշտ անհամբեր սպասում եմ իմ շատ սիրելի հայ հայրենակիցների հրաւերին եւ գերադասում եմ ներկայ գտնւել այս գեղեցիկ մրցութիւնների բացմանը, իսկ հրաւեր ստանալու պէս անպայման այն նշանակում եմ, որպէսզի չմոռանամ մրցութիւնների թւականը: Ինչպէս գիտեք՝ այս ամէն տարւայ հայկական կեանքի իրականութիւնները շատ ուղղակիօրէն արտացոլում է հայկական բոլոր ասպարէզներում: Այս տարի եւս հայկական կեանքը տեսաւ երկու գլխաւոր դէպք՝ մէկը շատ ուրախալի, իսկ միւսը՝ ոչ: Առաջինը դա հայ շախմատիստների փայլուն յաղթանակն էր Թուրքիայի Իստամբուլ քաղաքում կայացած շախմատի միջազգային



40-րդ օլիմպիադայում: Այս մրցութիւններում Չայաստանի շախմատի ազգային հաւաքականը շատ փայլուն հանդէս եկաւ եւ կարողացաւ դառնալ աշխարհի ախտեան: Այսպիսով Չայաստանը առաջ անցնելով շախմատում իր աւանդական մրցակցից՝ Ռուսաստանից եղաւ միակ երկիրը, որին յաջողեց դառնալ շախմատի օլիմպիադայի մրցութիւնների եռակի ախտեան: Այս իրադարձութիւնը այնքան կարելու էր, որ անգլիական յայտնի լրատւամիջոց BBC-ն մի յօդուած հրատարակեց այս վերնագրով՝ «Չայերը աշխարհի ամենախելացի ազգն են»: Այս յաղթանակի մասին խօսեցին գրեթէ բոլորը: Իսկ երկրորդը՝ դատմարդի մարդաստան աղբերջանցի բանակի սպայ Ռամիլ Սաֆարովի ազատ արձակումը եւ ապա նրան ազգային հերոսի կոչում պարգեւելն էր Ադրբեջանցի նախագահ Իլիամ Ալիեւի կողմից: Այս մասին շատ երկար խօսեց պատգամաւոր Կարէն Խանլարեանը, ասելով թէ՛ Ադրբեջանի կառավարութիւնը իր այս արարաբքով եւս մէկ անգամ ողջ աշխարհին ապացուցեց իր հակահայ քաղաքականութիւնը՝ ցոյց տալով իր կառավարական տերորիստական բնոյթը: Ինչպէս նաեւ խօսեց այն մասին, որ երբ նման արարքներ խստօրէն չեն դատապարտուում ապա այլ երկրները ինչպէս Թուրքիան իրենց առիթ են տալիս այն կրկնել մի այլ կերպ՝ պաշտպանելով Սիրիայի ապստամբներին:

*Էջ 21-ի լուսանկարները՝ Անի Ղելիջեան*



**ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՔԵԲԷ (ԿՈՏԼԵՏ)**

**Բաղադրուժիւն**

Չաւար	2 թէյի բաժակ (թրջած)
Աղացած միս	350 գրամ
Սոխ	4 գլուխ միջակ
Նուշի փոշի	3 ճաշի գդալ
Ընկոյզի փոշի	3 ճաշի գդալ
Չամիչ	2 ճաշի գդալ
Թթու լիմոնի աղ	1 ճաշի գդալ
Աղ, պղպեղ, դեղին կոճ, համեմունք	ըստ ճաշակի



## Պատրաստման եղանակ

Խմորը պատրաստելու համար, նախ, 150 գրամ աղացած միսը եւ թրջած ձաւարն ու մի գլուխ աղացած սոխը խառնել . աւելացնել աղն ու այլ համեմունքը եւ լաւ հունցել:

Քէբէի միջուկը պատրաստելու համար, 3 գլուխ սոխը մաքրել ու մանրացնել, ապա 200 գրամ մնացած մսի հետ խառնել ու բովել, եւ վերջում աւելացնել նաեւ ընկոյզը, նուշը, լիմոնի աղն ու համեմունքը եւ բոլորը միասին բովել: Խորհուրդ եմք տալիս չամիչը վերջում լցնել:

Այնուհետեւ պատրաստած խմորից վերցնել մի ընկոյզի չափ, բացել ու միւս խառնուրդից որպէս միջուկ մի փոքր կտոր դնել մէջը եւ հաւաքել ու գցել իւղի մէջ ու տապակել. կարելի է միջուկի համար ըստ ճաշակի՝ աւելացնել կամ պակսեցնել նուշը, ընկոյզը եւ չամիչը:

Վերջում քէբէները զարդարէք թարմ կիտրոնով կամ մաղադանոսով:

## Բ Ա Ր Ի Ա Խ Ո Ր Ժ Ա Կ



## ՏՆՏԵՍՈՒՅՈՒ ԱՆԿԻՆ ՍԱՔՐՈՒԹԵԱՆ ՀՆԱՐՔՆԵՐ

*Քարին Եաղուրի*

-Սառնարանի մակերեսը մաքրելու համար, բաւական է մի քանի կաթիլ փայտեղէն մաքրելու հեղուկ կաթեցնել նուրբ կտորի վրայ ու դրանով տորրել սառնարանը. անմիջապէս կը մաքրուի:

-Սառնարանի խոնաւութիւնը վերացնելու նպատակով, բաւական է մի փոքրիկ ամանի մէջ աղ լցնել ու դնել սառնարանի մէջ:

-Օջախի (փուռի) տհաճ հոտը վերացնելու համար, տապակի մէջ լցնել ջուր ու քացախ եւ դնել օջախի մէջ եւ այն վառել: Մի քանի րոպէ թողնել, ապա հանգցնել: Քացախը կոչնչացնի տհաճ հոտը:

-Մոմերը, երկար վառելու ու քիչ կաթիլներ թափելու համար, դրանք մի քանի ժամ օգտագործելուց առաջ, թողէք սառցարանում:

-Ծխախոտի տհաճ հոտը սեմեակում կարելի է ոչնչացնել մի վառ մոմով:

-Ջրամանի կամ շշի տակը, երկարատեւ օգտագործելուց, կորցնում է իր փայլը ու տգեղ տեսք ստանում: Նրա փայլը վերադարձնելու ու վերստին թափանցիկ դարձնելու համար մի գթալ աղ ու մի թէյի բաժակ քացախ լցնել այդ սափորի կամ շշի մէջ ու թողնել մնայ: Շուտով կը տեսնէք, որ նախկինից այն աւելի փայլուն կը դառնայ:

-Որպէսզի ձեր ճենապակեայ սպասքը փայլեն, կարող էք դրանք լաւացնելու ժամանակ վերջին անգամ ողողէք քացախով:

-Մրջիւնների դէմ պայքարելու հա-

